Ի կործանմանէ թաղային վարժարանաց մայրաքաղաքիս 28

Ի հաստատութենէ տպագրութեան ի Հայս եւ ի դժբախտութենէ տպարանապետաց, գրաշարաց, հեղինակաց, դասատուաց եւ դպրաց 321

Ի բարձմանէ հնազանդութեան ի փոքունց 20

Ի բարձմանէ գաւազանաց յազգային վարժարանաց 21

Ի կորստենէ կողմնացուցին ի Հայս 8

Ի գիւտոյ խաբէութեան 9

Յանկանոնութենէ հաւաքման ազգային տրոց 28

Ի բարձմանէ պարզասիրութեան ի Հայ կանանց 26

Յերկրորդ նորոգութենէ անտարբերութեան ի Հայս 18

ՓՈՒՆՋ

Երբ աղջիկ մը դադրի կարմրելէ՝ գեղեցկութեան ամենահզօր հրապոյրը կորուսած է։

•

Սիրոյ անձնատուր եղողը մեծութեանց եւ իմաստութեան հրաժեշտ կու տայ։

•

Երկինք պատիժ սահմանած չեն սիրահարաց երդումներուն համար։

•

Պզտիկ աղջիկներն պաճուճապատանքով կխաբուին, մեծերն ալ երդումով։

•

Լռութիւնն տրուած է կնոջ՝ իւր միտքը աւելի աղէկ բացատրելու համար։

•

Երբ աղջիկներն ամուսնանալու տարիքի մէջ են, իրենց լռութիւնն անգամ էրիկ մը կ'ուզէ։

•

Գեղեցիկ կին մը պարզ հագուելու է՝ աւելի շնորհք ունենալու համար, տգեղ կինն ալ պարզ հագուելու է՝ նուազ տգեղ ըլլալու համար։